



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Մ.Ը.Մ.Ի ԾՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ վարչութեան ատենապետ Տիար Սթիւ Արթինեանի, Երեքշաբթի, 29 Յուլիսի երեկոյեան այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Հանդիպումին ներկայ եղան Կրօնական Ժողովի ատենապետ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տիար Կարօ Աւագեան եւ անդամ Տիար Ներսէս Մելքոնեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցիչները եկած էին Առաջնորդ Սրբազանը շնորհաւորելու չորրորդ շրջանի մը համար Առաջնորդ իր վերընտրութեան առիթով: Անոնք մաղթեցին, որ ան իր ծառայական առաքելութիւնը շարունակէ դէպի նոր իրագործումներ: Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց բարեմաղթութեանց համար:

Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու Հ.Մ.Ը.Մ.Ի սերնդակերտ աշխատանքին ու, այս ծիրին մէջ, Ազգ. Առաջնորդարանին հետ գործակցութեան դաշտերուն շուրջ: Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի յայտնի ու անանուն այն զինուորագրեալներուն մասին, որոնք այս տարի եւս յաջողութեամբ պսակեցին Նաւասարդեան խաղերը, արձանագրելով նոր նուաճում մը: Խորհրդակցութիւնը ընդգրկեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի նոր բանակավայրին կապուած ծրագիրներ, նկատի ունենալով, որ բանակավայրը կոչուած է դառնալու երիտասարդութեան ու Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքի գործունեութեան մէկ իւրայատուկ օճախը:

## **PRELATE WELCOMES A DELEGATION FROM HOMENETMEN REGIONAL EXECUTIVE**

On the evening of Tuesday, July 29<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Regional Executive members of Homenetmen Western Region. The delegation was headed by Chairman Mr. Steve Artinian. Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian and

Executive Council Vice-Chair Mr. Garo Avakian and member Mr. Nerses Melkonian also participated in the meeting.

At the start of the meeting, the members of the delegation congratulated the Prelate on his re-election, for which the Prelate expressed thanks and appreciation. The Prelate and guests went on to discuss the endeavors of Homenetmen, such as the new campsite which is anticipated to become an important center for the youth and the larger Homenetmen family, and those that involve collaboration with the Prelacy. The Prelate commended all the members of Homenetmen for their dedication to the community and congratulated them on what was yet another successful Navasartian games.